

# Թարգմանություններ հայերենից՝ սկսած 1991 թ-ից. փաստեր, միտումներ և հանձնարարականներ

Հիմնված Գրքի հարթակ ծրագրի շրջանակներում 11  
երկրում կատարված ուսումնասիրությունների  
ամփոփման վրա

# Ուսումնասիրությունների ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հետանկախության միտումներ՝ ի՞նչն է փոխվել  
թարգմանությունների միջոցով արտերկրի  
հասարակության հետ հաղորդակցման պայմաններում

Ո՞րն է տարբեր միջնորդների դերը. թարգմանիչներ,  
հրատարակիչներ, պարբերականներ, ֆինանսավորող  
մարմիններ, միջոցառումներ,

Ինչպե՞ս է ընդունող լեզվի լսարանը ընկալում  
հայերենից թարգմանությունները

Որտե՞ղ են բացթողումները և հաջողված  
իրավիճակները



# ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

1. Հետազոտողների 11 ուսումնասիրություններն ընդգրկում են.  
Մատենագիտական տվյալների հավաքագրում  
Սղբյուրներ, ազգային գրադարաններ, համալսարանական գրադարաններ, Հայաստանի ազգային գրադարան, Index Translationum, BiP կատալոգներ, անձնական գրադարաններ, նախկին ուսումնասիրություններ  
Պատմական զարգացումների ակնարկ  
Տվյալ երկրի հրատարակչական և թարգմանական շուկայի վերանայում  
Մատենագիտական տվյալների վերլուծություն. հեղինակներ, ժանրեր, հրատարակչներ, թարգմանիչներ  
Հայաստանյան թարգմանիչների կարգավիճակը, մասնագիտական կրթությունը և հեռանկարները
2. Միջազգային փորձագետների կազմած՝  
Թարգմանության քաղաքականության բոլոր ուսումնասիրությունների արդյունքների ամփոփում
3. Ապագայում ռազմավարական մոտեցման և հնարավոր գործողությունների վերաբերյալ հանձնարարականներ
4. Տեղական փորձագետների գրավոր մեկնաբանություններ և ուսումնասիրությունների արդյունքների և հանձնարարականների շուրջ հանրային քննարկում

# ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ/ ՓԱՍՏԵՐԸ

Բոլոր ժանրերում գրքանունների քանակը շատ բարձր չէ. 21 տարվա ընթացքում 11 լեզուներով թարգմանված **221** գրքանուն

Նախորդ տասնամյակի համեմատ վերջին 10 տարիներին թարգմանությունների դինամիկան **աննշան աճել է**

**Ֆրանսերենը** հայերենից այլ լեզուներով թարգմանությունների մեջ՝ 60 գրքանուն

Հայերենից թարգմանություններն **անմիջապես արվել են բնագից**, ոչ թե միջանկյալ լեզվից

**Չափածո թարգմանությունները գերազանցում են արձակը**. դասական և ժամանակակից պոեզիան բոլոր թարգմանությունների շուրջ մեկ երրորդն է

Դասական գրականությունը, բանահյուսությունը և հոգևոր գործերը բացահայտ գերազանցում են նախորդ ժամանակաշրջաններին և ժանրերին

Գերակշռող են հայոց պատմության, քրիստոնեության, հայոց լեզվի և Հայոց Ցեղասպանության թեմաները

**Հովհաննես Թումանյանը** մինչ օրս մնում է ամենաշատ թարգմանված հեղինակը՝ 11 գրքանուն թարգմանված 5 լեզուներով

Եվրոպական որոշ՝ ավելի փոքր լեզուներով հայերեն թարգմանությունների վիճակը խիստ մտահոգիչ է՝ ակտիվ թարգմանիչների բացակայության պատճառով (օր. շվեդերեն), կամ էլ կա ընդամենը մեկ գործող թարգմանիչ (օր. հոլանդերեն, սերբերեն):

# ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

1. ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՀԱՅԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՋԱՆՔԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ. թարգմանիչը «բազմադեմ միջնորդ» է, ով մասնակից է հրատարակման ողջ ընթացքին. ընտրում է գործը, համոզում հրատարակչին, որ հրատարակի, ֆինանսական միջոցներ է գտնում դրա համար և մասնակցում է հրատարակված գրքանվան վաճառքը շուկայում խթանելուն:
2. ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԸ, ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ, ԽԹԱՆՈՂՆԵՐԸ ԵՎ, ԵՐԲԵՄՆ ՆՈՒՅՆԻՄԿ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ, ՍՈՎՈՐԱԲԱՐ, ԾԱԳՈՒՄՈՎ ՀԱՅԵՐ ԵՆ. հազվադեպ են արտերկրի «առաջատար» հրատարակիչների ակտիվ արձագանքները հայ գրողների նկատմամբ
3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԸ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ ԵՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, բայց մշակույթային միջնորդները կենտրոնանում են դասական և պատմական գրականության վրա
4. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ ՓՈՐՁՆ ԻՆՔՆԻՆ չնչին աջակցություն է հայ գրականությունը արտերկրի ընթերցողին ճանաչված դարձնելու գործին. նման հրատարակությունները որպես «գովազդ» են ծառայում իրենց հեղինակների կամ հրատարակիչների համար
5. ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ լուրջ խոչընդոտ է
6. ԱՃՈՒՄ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ, բայց դրա պահպանման համար չկան աղբյուրներ` ոչ մի տեղեկույթ, գրական գործակալներ, ֆինանսավորում, միջոցառումներ
7. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԲԱԶՄԱԹԻՎ ՋԱՆՔԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ա) միմյանցից. բ) արտերկրում հայ մշակույթի այլ ձևերի ցուցադրումներից և գ) բազմակողմանի միջազգային նախաձեռնությունների հետ համագործակցությունից, քիչ հայտնի լեզուներին նվիրված ցանցերից և նախագծերից

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՀԱՅԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՉԵՆ ԸՆԹԱՆՈՒՄ ԱՅՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ, ՈՐՈՆՅՈՎ, ՍՈՎՈՐԱԲԱՐ, ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

# ՀՆԱՐԱՎՈՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ՄԻԶՆՈՐԴՆԵՐԻ ՄԻԶՈՑՈՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. թարգմանիչների նկատմամբ համապատասխան ուշադրությունը կնպաստի հայերեն ուսումնասիրությունների բաժինների հետ սերտ հարաբերությանը, մեծ օգնություն կլինի թարգմանիչների նպատակաուղղվածության պահպանմանն ու թարգմանիչների բազմազան սերունդների շարունակականությանը, թարգմանիչների անընդմեջ վերապատրաստմանը և Հայաստանի հետ նրանց կապերի ամրապնդմանը

ՔԻՉ ՀԱՅՏՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՍԿՍՈՒՄ Է «ՏՆԻՑ», նման գրականության միջազգային ճանաչման արժանանալու շանսերը անմիջականորեն առնչվում են աշխարհին բաց ու ընկալելի ներկայանանալու, այլ աշխարհների նկատմամբ իր «հյուրընկալության» գործընթացներին, ինչն արտահայտվում է օտար գրականությունը սեփական լեզվով թարգմանելու մակարդակով, ու գրքի տոնավաճառ, փառատոն, ընթերցումներ կամ նման այլ միջոցառումներ կազմակերպելով

ՀԱՎԱՍՏԱՐ «ԵՐԿԻՈՍՈՒԹՅԱՆ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԻՑ, ԱՅԼ ՈՉ ԹԵ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԻՑ» ԿԱՍ, ՊԱՐԶԱՊԵՍ, ՏԵՔՍՏԵՐԸ ՕՏԱՐ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՀՐԱՄՅՆԵԼՈՒՑ ՄԿՍԵԼԸ հաջողության հասնելու լավ հնարավորություն է ընձեռում

ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԼՍԱՐԱՆԻ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԻ, ԳԻՏԵԼԻՔԻ, ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼՆԻ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ ԱՌԱԶԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է հաջողության հասնելու մեծ հնարավորություն տալիս և ոչ թե միայն «լավագույն» հայ գրականությունը խթանելու փորձերը

ՄԻՋՈՑՆԵՐ

- o հայերենից թարգմանության ու հրատարակման խթանմանն **աջակցող գործակալություն**- անկախ և խառը ֆինանսավորման աղբյուրներով
- o Օտար հրատարակիչների, թարգմանիչների, պարբերականների, միջոցառումների և այլ նախագծերի համար **դրամաշնորհային սխեմաներ**
- o **Թարգմանական և այլ մրցանակներ**. առկա և նորերի ստեղծման ավելի լավ խթանում
- o Թարգմանիչների, հեղինակների, խմբագիրների և լրագրողների համար **հյուրընկալ ծրագրեր** ներառյալ բնակարաններ, կրթաթոշակներ և մենտորական ծրագրեր երիտասարդ թարգմանիչների համար
- o **Շարժունության ծրագրեր**՝ ուղղված կղզիացման հաղթահարմանը՝ նպաստելով մասնակցությանը միջազգային միջոցառումներին,
- o **Տեղեկատվական աղբյուրները**, որոնք մատչելի և ըմբռնելի են միջազգային միջնորդներին



ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ  
ԱՄՓՈՓՄԱՆ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍԱՆԵԼԻ Է  
ԱՅՍԵՂ

[www.bookplatform.org](http://www.bookplatform.org)

(Աղբյուրների հատված)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆՔ ՄԱՂԹՈՒՄ